ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/40/1944-20 ստ "14" 10 2020թ.

Ձեր № ______ ստ "___" ________ 2020թ.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն. Է. Հովսեփյանին
էլ.փոստ. elaam@bk.ru

[Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Հովսեփյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով ս/թ ապրիլի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 836 զույգ կոշիկի մատակարարման նպատակով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. հունիսի 23-ին կնքվել է թիվ 01/148 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով մատակարարվող կոշիկի տեխնիկական բնութագիր է սահմանվել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով նշված տեխնիկական բնութագիրը, այն է՝ «Բանվորական, գույնը՝ սև, աշխատանքային կոշիկներ պոլիուրեթանային ներբանով: Վերին մասը՝ բնական կաշվից անջրանցիկ ծածկույթով (юфть), լեզվակը՝ կաշվե: Ներբանը պոլիուրեթանյին, անտիստատիկ, ներբանի կցման եղանակը՝ սոսինձ, միջատակը՝ շարժական (ЭВА/текстиль): Քթամասը՝ մետաղական մինչև 200 ջոուլ ուժից պաշտպանվելու համար (подносок металлический (200Дж)), կոշկաքուղեր (шнурки): Գույնը՝ սև, քաշը՝ 1,1 կգ, կաշին փոսիկներով (չծակված), ԳՕՍՏ 12.4.137-84 ТР ТС 019/2011», իսկ մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օր, որը ս/թ օգոստոսի 11-ին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի առաջարկությամբ կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով վերջնաժամկետը երկարացվել է ևս 30 օրացուցային օրով (11.09.2020 ներառյալ):

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված կոշիկների վերաբերյալ առկա է «ՀԱԷԿ» ՓԲԸ ս/թ հոկտեմբերի 5-ի թիվ 10.20-281 ակտը, որտեղ նշված է, որ բացակայում է բնական կաշի լինելը հաստատող փաստաթուղթը և «ՍԻՍՏԵՄԷՔՍ» ԲԲԸ անկախ փորձագիտական լաբորատորիայի կողմից ս/թ հոկտեմբերի 9-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրությունը, որով տրվել է հետևյալ եզրակացությունը՝ կոշիկ բանվորական, սև գույնի, նախշով (նակատ), երեսամասը կրկնակիչ բազմաշերտ նյութից է, որի առաջին շերտը սև գույնի պոլիամիդային կաշվե կտորից է, հակառակ կողմը պատված է ջրակայուն լատեքսային շերտով, երկրորդը՝ փրփրապոլիուրէթանային քաթանանման շերտ է, երրորդ շերտը սինտեպոնից է, չորրորդ շերտը բարակ, ցանցաձև,

սինթետիկ կտոր է: Լեզվակը արհեստական կաշվից է: Տակացուն և ներբանը պոլիուրէթանային պոլիմեր է: Նշված երկու փաստաթղթերը վկայում են այն մասին, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ կողմից մատակարարված կոշիկները չեն համապատասխանում պայմանագրին:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

- 1.1 կետի - «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Գնորդ) մատակարարել պայմանագրի N1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված հանդերձանք (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար,
- 2.1.1 կետ - Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,
- 2.1.2 կետ - Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը,
- 2.1.7 կետ - Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

  ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,
- 2.4.4 կետ - Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,
- 2.4.7 կետ - Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,
- 2.4.9 կետ - Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները,
- 6.1 կետ - Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար
- 6.3 կետ - Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում,

- 6.4 կետ - Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ :

Հիմք ընդունելով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. հունիսի 23-ին կնքված թիվ 01/148 պայմանագրի վերոգրյալ դրույթները, «ՀԱԷԿ» ՓԲԸ ս/թ հոկտեմբերի 5-ի թիվ 10.20-281 ակտը, և «ՍԻՍՏԵՄԷՔՍ» ԲԲԸ ՓԼ կողմից ս/թ հոկտեմբերի 9-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. հունիսի 23-ին կնքված թիվ 01/148 պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով և առաջարկում հնարավորինս սեղմ ժամկետներում ետ տանել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը՝ կոշիկները:

Հարգանքներով,

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Հ. Գևորգյան
ԳՄԾ պետ
Հեռ. 010-20-04-91